ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀԿԱԾ-ԳՀԱՇՁԲ-21/35/1»

ք. Երևան «16» հունիս 2021թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ», մի կողմից, և «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «ԿԱՊԱԼԱՌՈՒ» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի /ք. Սևան/ վարչական տարածքի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10799408 (տաս միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ, որից 1799901 (մեկ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր մեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և

ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա	ք.Երևան, Կարապետյան փ. 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության	«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011288025	Հ/Հ 11811006695800
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 01277633
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 16 » հունիսի 2021թ. կնքված
***ՀԿԱԾ-ԳՀԱՇՁԲ-21/35/1** ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ /Ք. ՍԵԱՆ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

/ներկայացվում է կից /

Չափաբաժին 1. *Շենքերի, շինությունների /ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ /Ք. ՍԵԱՆ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ/ ընթացիկ նորոգման աշխատանքներ.*

Հ/Հ NN	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափ.միավ.	Քանակ	Արժեքը հազ դրամ	
				Միավորի	Ընդհանուր
1	2	3	4	5	6
	1 Շենքի 2-րդ հարկի վերանորագման աշխատանքներ				
1	Պատերի և շեպերից գաջի սվաղի քանդում	քմ	204.5	0.10	20.450
2	Պատերից ներկի մաքրում	քմ	681.5	0.10	68.150
3	Պատերից յուղաներկի մաքրում	քմ	60	0.10	6.000
4	Առաստաղներից գաջի սվաղի մասնակի պոկում	քմ	75.6	0.10	7.560
5	Առաստաղներից ներկի մաքրում	քմ	252	0.10	25.200
6	Փայտե պատուհանների քանդում պատուհանագորգերի հետ միասին /վերադարց պատվերատունի/ 37.8+21	քմ	58.8	0.50	29.400
7	Փայտե դռների քանդում /վերադարց պատվերատունի/	քմ	26.4	0.50	13.200
8	Մամլոգրանիտե հատակների քանդում	քմ	4.8	1.00	4.800
9	Մանրատախտակի քանդում հատակներից /վերադարց պատվերատունի/	քմ	243.1	0.20	48.620
10	Փայտյա շրիշակների քանդում /վերադարց պատվերատունի/	մ	216	0.01	2.160
11	Միջնապատերի իրականացում պեմզաբլոկի շարվածքով	քմ	2.73	3.00	8.190
12	<<Եվրո>> տիպի մետաղապլաստե պատուհաններ բացվող ապակեփաթեթով կաղնեգույն	քմ	18.9	35.00	661.500
13	<<Եվրո>> տիպի մետաղապլաստե պատուհաններ չբացվող ապակեփաթեթով կաղնեգույն	քմ	18.9	30.00	567.000
14	<<Եվրո>> տիպի մետաղապլաստե խուլ դռներ ապակեփաթեթով կաղնեգույն	քմ	1.89	39.00	73.710
15	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում քարե պատերում /21*0.3/ կաղնեգույն	քմ	6.3	10.00	63.000
16	Պատերի բարձորակ ներկում լատեկսով	քմ	681.6	1.30	886.080
17	Առաստաղների բարձորակ ներկում լատեկսով	քմ	252	1.30	327.600
18	Պատերի և շեպերի գաջի սվաղի իրականացում	քմ	204.5	2.00	409.000
19	Պատերի և շեպերի մածիկապատում գիպսային մածիկով	քմ	681.6	0.30	204.480
20	Պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով	քմ	1.8	2.00	3.600
21	Պատերի երեսապատում կերամիկական գլազուրապատ սալիքներով	քմ	0.72	7.00	5.040
22	Առաստաղների գաջային սվաղի մասնակի իրականացում	քմ	75.6	0.50	37.800
23	Առաստաղների մածիկապատում գիպսային մածիկով	քմ	252	0.30	75.600
24	Աստիճանավանդակի մեկ թռիչկի երեսապատում մամլոգրանիտե /պրեցգրանիտ/ սալերով	քմ	11.8	9.00	106.200
25	Հատակների ցեմենտե/ավազային հարթեցնող շերտի իրականացում 10մմ /Աստիճանավանդակի/	քմ	4.9	0.50	2.450
26	Հատակների ցեմենտե/ավազային հարթեցնող շերտի իրականացում 10մմ	քմ	249.7	0.50	124.850
27	Մամլոգրանիտե /պրեցգրանիտ/ հատակների իրականացում	քմ	41.4	8.00	331.200
28	Մամլոգրանիտե շրիշակների իրականացում h-10սմ	մ	42.5	0.80	34.000
29	Լամինատե հատակների իրականացում /շրիշակով/	քմ	205.7	6.50	1337.050
30	Մետաղական ճաղավանդակների ներկում երկու անգամ	քմ	3.3	2.00	6.600
31	Շենքի տարածքի շին աղբի հավաքում և կուտակում բարձելու համար	տ	30.4	1.55	47.120

32	Բեռնում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	30.4	1.50	45.600
33	Շինարարական աղբի տեղափոխում մինչև 5կմ	տ	30.4	1.50	45.600
34	Բեռնաթափում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	30.4	0.30	9.120
	ԸՆԴԱՄԵՆԸ				**5637.930**
	2 Ներքին ջրամատակարարում				
1	Սառը ջրի պոլիպրոպիլենե խողովակի մոնտաժում d-20մմ	մ	2	2.00	4.000
2	Անկյունային փական d-15մմ	հատ	1	1.50	1.500
3	Ճկափող d-15մմ, L-500մմ		1	1.00	1.000
4	Լվացարանի ջրընդունիչ ծորակ Խառնիչի տեղադրում	հատ	1	5.00	5.000
5	Խողովակների միացում գոյություն ունեցող ջեռուցման և ջրամատակարարման ներքին ցանցի խողովակաշարերին, 20մմ տրամագծով	հատ	1	2.00	2.000
6	Ջեռուցման, սառը և տաք ջրամատակարարման խողովակաշարերի հիդրավլիկ փորձարկում, մինչև 50մմ տրամագծով	մ	2	0.30	0.600
7	Պատում անցքի բացում d- 50մմ	հատ	1	1.00	1.000
8	Պատում անցքի փակում	հատ	1	0.50	0.500
	ԸՆԴԱՄԵՆԸ				**15.600**
	3. Ներքին կենցաղային կոյուղի				
1	Պոլիվինիլքլորիդային կոյուղու Խողովակների մոնտաժում, տրամագիծը 50մմ	մ	2	1.00	2.000
2	Լվացարանների տեղադրում սիֆոնով սառը և տաք ջրի միացումով	լր-մ	1	25.00	25.000
3	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում. թեքում, ծունկ, կառճախողովակ, անցում	հատ	4	1.00	4.000
4	Ջեռուցման, սառը և տաք ջրամատակարարման խողովակաշարերի հիդրավլիկ փորձարկում, մինչև 50մմ տրամագծով	մ	2	0.30	0.600
5	Պատում անցքի բացում d- 80մմ	հատ	1	1.00	1.000
6	Պատում անցքի փակում	հատ	1	0.50	0.500
	ԸՆԴԱՄԵՆԸ				**33.100**
	4.Ջեռուցում				
1	Գազի կաթսա 32 կՎտ	հատ	1	350.00	350.000
2	Ջերուցման մարտկոցների տեղադրում	էկմ	12	5.00	60.000
3	Ռադիատորի միացման կոմպլեկտ		3	2.00	6.000
4	Խողովակաշար ՊՊՌ խողովակներով տրամագիծը 20մմ	մ	50	1.00	50.000
5	Խողովակաշար ՊՊՌ խողովակներով տրամագիծը 25մմ	մ	40	1.20	48.000
6	Խողովակաշար ՊՊՌ խողովակներով տրամագիծը 32մմ	մ	80	2.00	160.000
7	Պատի կոնդիցիոներ 12000 BTU հզորությամբ	հատ	0		0.000
8	Ղեկավարման մալուխ ВВГ- 4*2.5	մ	12	0.60	7.200
	ԸՆԴԱՄԵՆԸ				**681.200**
	5.Ներքին լուսավորություն				
1	Գոյություն ունեցող լուսավորության վահանակի ապամոնտաժում	հատ	1	1.00	1.000
2	Լուսավորության վահանակ ավտոմատ անջատիչներով,հոսանքը մինչև 100Ա,խմբերի քանակը 16	հատ	1	3.00	3.000
3	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ),հոսանքը մինչև 63Ա	հատ	1	6.00	6.000
4	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ) ,հոսանքը մինչև 3Ա	հատ	1	2.00	2.000
5	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ),հոսանքը մինչև 6Ա	հատ	2	2.00	4.000
6	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ),հոսանքը մինչև 10Ա	հատ	1	2.00	2.000
7	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ),հոսանքը մինչև 16Ա	հատ	1	2.00	2.000
8	Ավտոմատ միաբևեռ,երկբևեռ,եռաբևեռ,,կոնստրուկցիաների վրա,(վահանակի մեջ),հոսանքը մինչև 20Ա	հատ	7	2.00	14.000
9	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 40 Վտ,լույսային հոսքը 3200Լմ, 4000 Կ , 595x595մմ չափերով, IP20	հատ	22	8.00	176.000
10	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 40 Վտ, լույսային հոսքը 3100Լմ, 4000 Կ , 1195x295մմ չափերով, IP20	հատ	10	8.00	80.000

11	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ,35 Վտ, լույսային հոսքը 2850Լմ, 4000 Կ , 1195x295մմ չափերով, IP20	հատ	5	8.00	40.000
12	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ,32 Վտ, լույսային հոսքը 2780Լմ, 4000 Կ , 1195x295մմ չափերով, IP20	հատ	2	8.00	16.000
13	Պատի LED լուսատուների տեղադրում 220Վ,16 Վտ, IP67	հատ	2	6.00	12.000
14	Վարդակ խրոցային ընկղմված, փակ հաղորդալարի հսմար	հատ	106	0.10	10.600
15	Անջատիչ միաստեղ միաբևեռ ներքին տեղադրման	հատ	8	2.00	16.000
16	Անջատիչ երկստեղ միաբևեռ ներքին տեղադրման	հատ	6	2.00	12.000
17	Անջատիչ եռաստեղ միաբևեռ ներքին տեղադրման	հատ	1	2.00	2.000
18	Բաժանման տուփ	հատ	59	0.10	5.900
19	Հաղորդալարի անցկացում պատի մեջ ШВВП 2*1.5	մ	290	0.30	87.000
20	Հաղորդալարի անցկացում պատի մեջ ШВВП 3*2.5	մ	460	0.50	230.000
21	Ակոսների փորում պատերում	մ	550	0.20	110.000
22	Պատերի բարելավված սվաղ շենքերի ներսում գաջով	քմ	11	2.00	22.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**853.500**
	6.Հակահրդեհային ահազանգման համակարգ				
1	Ընդունիչ-հսկիչ պամել 8 գոտու համար.առանձացված կառավարման վահանաով	հատ	1	70.00	70.000
2	GSM մոդուլ	հատ	1	32.00	32.000
3	Սնուցման սարքի տեղադրում 12Վ 1Ա	հատ	1	5.00	5.000
4	Անընդհատ սնուցման բլոկ (կուտակիչ մարտկոց) 12Վ 7Ա*ժ	հատ	1	13.00	13.000
5	Ծխաջերմային համակցված ազդարարքի տեղադրում պատերին և առաստաղին	հատ	25	8.00	200.000
6	Ձեռքի ազդարարի տեղադրում	հատ	1	12.00	12.000
7	Լուսաձայնային ազդարարի տեղադրում	հատ	1	10.00	10.000
8	Ներքն ձայնային ազդարարարման սարքի տեղադրում (շչակ)	հատ	1	8.00	8.000
9	Մալուխի տեղադրում տուփախողովակում	մ	100	0.30	30.000
10	Մալուխի տեղադրում տուփախողովակում	մ	25	1.00	25.000
11	Տուփախողովակի տեղադրում պատերով	մ	106	0.10	10.600
12	Համակարգի կարգաբերում և փորձարկում և միացում ԱԻՆ համակարգին	համակ.	1	10.00	10.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**425.600**
	7. Տեսահսկողություն				
1	Ցանցային տեսաձայնագրիչ 1080p, 8 մուտք	հատ	1	60.00	60.000
2	Ուղղորդիչ (Switch) 1*SFP և 2*PoE մուտք, 6*PoE ելք, 10/100/1000, ներառյալ սնուցման բլոկ	հատ	1	40.00	40.000
3	Անընդհատ սնուցման սարք (UPS)	հատ	1	23.00	23.000
4	Տեսախցիկ գունավոր, 5MP, 1080p, f=3.2, ներքին տեղադրման	հատ	4	23.00	92.000
5	Տեսախցիկ գունավոր, 8MP, 1080p, f=6, արտաքին տեղադրման	հատ	1	23.00	23.000
6	Մալուխի տեղադրում տուփախողովակում	մ	30	1.00	30.000
7	Մալուխի տեղադրում տուփախողովակում	մ	10	1.00	10.000
8	Տուփախողովակի տեղադրում պատերով	մ	34	0.30	10.200
9	Համակարգի կարգաբերում և փորձարկում	համակ.	1	10.00	10.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**298.200**
	8.Համացանցային և հեռախոսային ցանց				
1	Ուղղորդիչ (Switch) 2*PoE մուտք, 24*PoE ելք, 10/100/1000, ներառյալ սնուցման բլոկ	հատ	1	43.00	43.000
2	Հեռախոսային ավտոմատ մինի կայան (Мини АТС) 24 ներքին համարով ,արտաքին ցանց ելքով	հատ	1	66.00	66.000
3	Տեղեկատվական վարդակ ներքին տեղադրման 2xRJ45, ներառյալ ենթավանդակային տուփը	հատ	15	3.00	45.000
4	Մալուխի տեղադրում ակոսներում	մ	30	1.00	30.000
5	Ակոսների փորում պատերում	մ	804	0.01	8.040
6	Պատերի բարելավված սվաղ շենքերի ներսում գաջով	քմ	16.1	2.00	32.200
7	Համակարգի կարգաբերում և փորձարկում	համակ.	1	12.00	12.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**236.240**
	ԸՆԴԱՄԵՆԸ 1----8				**8181.370**
	Շահույթ Прибыль				818.137
	Ընդամենը Итого				8999.507
	ԱԱՀ 20% НДС				1799.901
	Ընդամենը Всего				**10799.408**

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝

<u>Զափաբաժին 1-ի դեպքում՝ հասցե ք. Սևան, Նաիրյան 1-ին նրբանցք,</u> հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Հ/Հ 900011288025 ՀՎՀՀ 01223338	«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ ք.Երևան, Կարապետյան փ. 9 «ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ Հ/Հ 11811006695800 ՀՎՀՀ 01277633
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 2
« 16 » հունիսի 2021թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀԱՇՁԲ-21/35/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ /Ք. ՍԵԱՆ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*շենքերի, շինությունների /հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի /ք. Սևան/ վարչական տարածքի հիմնանորոգման/ ընթացիկ նորոգման աշխատանքներ*	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
ք.Երևան, Կարապետյան փ. 9
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11811006695800
ՀՎՀՀ 01277633

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> այունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված թիվ 4
« » հունիսի 2021թ. կնքված
***ՀԿԱԾ-ԳՀԱՇՁԲ-21/35/1** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » հունիսի 2021թ. կնքված
***ՀԿԱԾ-ԳՀԱՇՁԲ-21/35/1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն